

# 2020


ANNUAL REPORT





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ .....	3
2020 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	7
2020 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ .....	8
ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ .....	11
ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ .....	13
ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ .....	15
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ .....	16
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ .....	17
ԿԱԴՐԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	19
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ.....	21
ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ .....	22
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ .....	23
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	25
ՄԵՐ ԹԻՄԸ .....	26
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇ .....	28
ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ .....	29



ՍԱՆԱՅԻՆ

XII-րդ դար. ք. Ալավերդի, Լոռու մարզ

## ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հայաստանյան բանկային համակարգի համախառն ակտիվները 2020թ.-ին կազմել են 6,643 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 14.6%-ով: Բանկերի ակտիվների աճի տեմպերն արտացոլում են վարկավորման ծավալների աճը: Համակարգի վարկային ներդրումների ընդհանուր ծավալը 2020թ.-ի արդյունքներով կազմել է ավելի քան 4,053 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 13.6%-ով 2019թ.-ի նույն ցուցանիշի նկատմամբ:

Բանկերի պարտավորությունները հաշվետու տարում աճել են 16%-ով կազմելով 5,748 մլրդ ՀՀ դրամ: Համախառն ավանդների ծավալը 2020թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 3,564 մլրդ ՀՀ դրամ, ինչը 2.4%-ով կամ 84.7 մլրդ դրամով ավելի է 2019թ.-ի դեկտեմբերի ցուցանիշից:

ՀՀ բանկային համակարգի շահույթը 2020թ.-ին կազմել է 60 մլրդ ՀՀ դրամ: Հաշվետու տարում տնտեսական աճը Հայաստանում կազմել է -7.4%, ՀՆԱ-ն՝ 6,182 մլրդ ՀՀ դրամ կամ 11,8 մլրդ ԱՄՆ դոլար: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 2,085.5 հազ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 3,991 հազ ՀՀ դրամի դիմաց:

### ԱՃԻ ՄԻՏՈՒՄԸ

2010-2020թթ./ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

427%

ԱԿՏԻՎՆԵՐ

426%


ԿԱՊԻՏԱԼ


273%

2020 թվականի ընթացքում Բանկի գործունեության առանցքային ուղղությունն էր ֆինանսական դժվարություններին առընչված հաճախորդների աջակցման ուղղությամբ լուծումներ մշակելը:

Կորոնավիրուսի համավարակը դարձավ լուրջ մարտահրավեր համաշխարհային տնտեսության բանկային համակարգի համար: Հայաստանի համար նախորդ տարին ծայրաստիճան ծանր էր ու դժվար նաև Արցախում ծավալված ռազմական գործողությունների պատճառով: Բանկերը բախվեցին խնդիրների, որոնք անհրաժեշտ էր լուծել ոչ թե փուլ առ փուլ, այլ գլուգահեռ:

Երկրում տնտեսական և սպառողական ակտիվության վերականգմանը հետ մեկտեղ, ինչպես նաև ամրության կուտակված պաշարի շնորհիվ Յունիբանկը բարելավեց ֆինանսական կայունության ցուցանիշները և գրանցեց դրական դինամիկա առանցքային ռազմավարական ուղղություններով:





### ՋԵՐՄՈՒԿ

XIII-րդ դար. Վայոց Ձորի մարզ

## 2020 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Բանկն ընդլայնել է իր ներկայության աշխարհագրությունը և բացել է երկու նոր մասնաճյուղեր՝ Ապարան, Սիսիան: Տարեվերջի դրությամբ Յունիբանկի մասնաճյուղային ցանցն ընդգրկել է 53 մասնաճյուղ Հայաստանում և Արցախում, Մոսկվայում գործում է Բանկի ներկայացուցչությունը, որն օժանդակում է օտարերկրացի հաճախորդների ներգրավմանը: Մեկնարկել է Աստանա Միջազգային Ֆինանսական Կենտրոնի հարթակում մասնաճյուղի բացման աշխատանքները՝ որպես օտարերկրյա ներդրումների ներգրավման նոր հնարավորությունների ուղի:
- Բանկի ներդրումային քաղաքականության նկատմամբ նոր մոտեցման իրագործման նպատակով ստորագրվեց Հայաստանի բանկային պատմության մեջ առաջին անգամ Մոսկվայի բորսայում բանկի արժեթղթերի շրջանառության վերաբերյալ պայմանագիրը, որի արդյունքում Յունիբանկի դոլարային պարտատոմսերը ցուցակվել են Մոսկվայի բորսայում:
- Յունիբանկը Հայաստանի բանկային պատմության մեջ առաջին անգամ իրականացրեց դոլարային պարտատոմսերի երկրորդային ցուցակում Մոսկովյան բորսայում, դրանով իսկ ընդլայնելով կապիտալի տեղական շուկայի զարգացման և ներդրումների ծավալների մեծացման հնարավորությունները: Արդի տեղեկատվության բացահայտմամբ Բանկը հանդես եկավ թափանցիկության նոր մակարդակով: Բանկը հաջողությամբ տեղաբաշխել է պարտատոմսերի 14 թողարկում ավելի քան 30 մլն ԱՄՆ դոլարի և 3 մլրդ ՀՀ դրամի:
- Յունիբանկը հաջողությամբ ներդրեց արհեստական բանականության տեխնոլոգիան՝ թարմացնելով անգրավ սպառողական վարկերի գծով վարկային սքորինգը: Նորարարական ալգորիթմն օգնում է էապես կրճատել ծախսերը, մշակել մեծ ծավալի տեղեկատվություն, վերլուծել և մոդելավորել հաճախորդի պրոֆիլը՝ դրանով իսկ նպաստելով զանգվածային վարկավորման աճին:
- Raiffeisen Bank International ավստրիական բանկը միջազգային փոխանցումների բարձր որակ ապահովելու համար Յունիբանկին շնորհել է «Որակի գերազանցություն 2020» (STP Quality Award) մրցանակը
- Յունիբանկն արժանացել է Visa միջազգային վճարային համակարգի կողմից սահմանված «Sustainability Icon» մրցանակին
- Յունիբանկի տվյալների մշակման կենտրոնը սկսել է աշխատել կանաչ էներգիայով

# 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲԱՆԿԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ԱԿՏԻՎՆԵՐ

## 238.172

ՄԼՆ ԶՅ ԴՐԱՄ

ՎԱՐԿԵՐ

## 156.575

ՄԼՆ ԶՅ ԴՐԱՄ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 204.273

ՄԼՆ ԶՅ ԴՐԱՄ

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ

## 9.498

ՄԼՆ ԶՅ ԴՐԱՄ

ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

## 10.051

ՄԼՆ ԶՅ ԴՐԱՄ

ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

## 2.156

ՄԼՆ ԶՅ ԴՐԱՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

## 33.899

ՄԼՆ ԶՅ ԴՐԱՄ

ԶՈՒՏ ՇԱՐՈՒՅԹ


## 239

ՄԼՆ ԶՅ ԴՐԱՄ


Բնակչության, տնտեսության և ֆինանսական հատվածի աջակցմանն ուղղված պետական ծրագրերը և Կենտրոնական բանկի միջոցառումները նպաստեցին ճգնաժամի բացասական հետևանքների սահմանափակմանը: Հետևելով հաճախորդամետ մոտեցման սկզբունքներին՝ Բանկը սեփական ծրագրերի շրջանակներում անհապաղ գործարկեց հակաճգնաժամային գործիքներ՝ տրամադրելով հաճախորդներին հնարավորություն օգտվել վարկային արձակուրդներից և պարտավորությունների վերակառուցումից: 4-րդ եռամսյակում Բանկի օրակարգի կարևորագույն հարցը ռազմական գործողությունների մասնակիցներին և վերջիններիս ընտանիքներին աջակցելն էր:

# 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՅՈՒՆԻԲԱՆԿՆ ԱՊԱՅՈՎԵԼ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ


«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՄԼՆ ԴՐԱՄ)



«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԱԿՏԻՎՆԵՐ (ՄԼՆ ԴՐԱՄ)




«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ (ՄԼՆ ԴՐԱՄ)




ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Բանկի ընդհանուր վարկային ներդրումներն առ 31.12.2020թ. կազմել են ընդհանուր ակտիվների 66%-ը: Դրամային վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 52%-ը: Վարկավորման միջին տոկոսադրույքը կազմել է տարեկան 9.4%: Բարելավվել է իրավիճակը ժամկետանց պարտավորությունների մասով, չաշխատող վարկերի մակարդակը 39%-ից նվազել է մինչև 24%-ի, տարվա ընթացքում իրականացված հետձյալ միջոցառումների արդյունքում բիզնես գործընթացների ավտոմատացում, սքրինգային համակարգերի բարելավում, վերակառուցում, հետբերման աշխատանքների ակտիվացում, ՓՄՁ վարկավորման կենտրոնի և Անդերրայթինգի ուժեղացում, վարկավորման շուկայի սեզամենտավորում:

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ




ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ




## ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Ժամկետային ավանդների պորտֆելը հաշվետու տարվա վերջում կազմել է 105.8 մլրդ դրամ: Վերջինիս կառուցվածքում գերակշռում են բնակչությունից ներգրավված միջոցները՝ 87.9 մլրդ դրամ կամ պորտֆելի 83.1%-ը: Ցպահանջ ավանդները 2020թ. ընթացքում ավելացել են 30.5 մլրդ դրամով և կազմել են 51 մլրդ դրամ, որից 31.6 մլրդ դրամը՝ բաժին է ընկել իրավաբանական անձանց, 19.4 մլրդ դրամը՝ բաժին է ընկել ֆիզիկական անձանց: Ընդհանուր պարտավորությունների ֆոնդավորման արժեքը նվազել է 0.13%-ով:


### ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ



### ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ







## ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ

Յունիբանկը տեղական մանրածախ վարկավորման շուկայում առաջատար դերակատարներից մեկն է, հաճախորդների բազան ընդգրկում է Հայաստանի աշխատունակ բնակչության մոտ 1/3-ը: 2020 թվականին Յունիբանկը ֆիզիկական անձանց տրամադրել է 70 մլրդ դրամ գումարի վարկեր, սպառողական վարկավորման ծավալն ապահովված է այդ թվում հարմարավետ գործիքակազմի մշակման և տոկոսադրույքների նվազման հաշվին: Մեծ պահանջարկ են շարունակել ունենալ անգրավ սպառողական վարկերը և ոսկու գրավով վարկերը:

Բջջային հավելվածի գործունակության ընդլայնման շրջանակներում մշակվում է մանր անգրավ վարկերի ստացման հայտի ձևակերպումը: Սոցիալ-տնտեսական ճգնաժամի արդյունքում սպառողական վարկերի գծով պահուստին հատկացումները կազմել են ավելի քան 1 մլրդ դրամ, ինչը գրեթե երկու անգամ գերազանցում է 2019թ. ցուցանիշը: Ըստ վիճակագրության վերլուծության, այս տարվա մարտ ամսից վարկառուների վճարային կարգապահության բարելավում է նկատվում: 2020 թվականի արդյունքներով Յունիբանկն առաջատար դարձավ տրամադրած ապառիկ վարկերի քանակով: Ապառիկ վարկավորման ոլորտում Բանկին բաժին է ընկնում շուկայի ընդհանուր ծավալի մոտ 20%-ը:

Մանրածախ վարկային պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը 2020թ. ընթացքում նվազել է 0.59 տոկոսային կետով և կազմել է տարեկան 11.32%: Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների պորտֆելը տարեսկզբից աճել է 8.3 մլրդ դրամով կամ մոտ 9%-ով: Բանկի թողարկած պարտատոմսերի պորտֆելի կառուցվածքում տեսակարար կշռի 80%-ը բաժին է ընկնում ֆիզիկական անձանց պարտատոմսերին, ինչը վկայում է բնակչության բարձր վստահության և երկարաժամկետ ներդրման գործիքում սեփական խնայողությունները տեղաբաշխելու պատրաստակամության մասին: 2020թ. վերջի դրությամբ ակտիվ մանրածախ հաճախորդների քանակը գերազանցել է 314.000-ը:

Սպառողական վարկավորման ծավալն ապահովվել է այդ թվում նաև հարմար գործիքակազմի մշակման և մի շարք գործընթացների ավտոմատացման շնորհիվ: Յունիբանկը թարմացրել է անգրավ սպառողական վարկերի սքորինգային համակարգը /վարկարժանության գնահատական/ ներդնելով արհեստական բանականության տեխնոլոգիան: Արհեստական բանականության տեխնոլոգիան հնարավորություն է տալիս ավելի արագ և որակյալ մշակել մեծ ծավալի տեղեկատվություն, վերլուծել հաճախորդների տվյալները և ավելի մեծ ճշգրտությամբ կառուցել նրանց պրոֆիլը:

Արդյունքում բանկը, խնայելով ժամանակը և միջոցները, կարողանում է էլ ավելի օպտիմալացնել վարկերի գծով որոշումների ընդունման գործընթացը, բարձրացնել ռիսկերի գնահատման որակը և բարելավել բարեխիղճ հաճախորդների սպասարկումը՝ նրանց առաջարկելով վարկավորման ավելի լավ պայմաններ:

Յունիբանկը, հավատարիմ մնալով բիզնեսին աջակցելու իր քաղաքականությանը, միացավ կորոնավիրուսի տնտեսական հետեւանքների չեզոքացմանն ուղղված ՀՀ կառավարության նախաձեռնությանը:

## ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

Բանկի ակտիվները 2020 թվականին կազմել են 138.1 մլրդ ՀՀ դրամ, իսկ վարկային ներդրումները մոտ 156 մլրդ ՀՀ դրամ:

Փոքր և միկրո բիզնեսի վարկավորումը շարունակել է մնալ Յունիբանկի զարգացման գերակա ուղղություն կորպորատիվ սեգմենտում՝ պոտենցիալ նիշաների ընտրության նկատմամբ ճյուղային մոտեցման կիրառմամբ: Միկրո, փոքր և միջին բիզնեսի սեգմենտի ֆինանսավորումը շարունակել է մնալ Յունիբանկի վարկային քաղաքականության գերակա ուղղությունը: 2020թ. ընթացքում բիզնես վարկերի պորտֆելը աճել է 6%-ով և կազմել է 67 մլրդ ՀՀ դրամ:

Կորպորատիվ վարկային պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը 2020թ-ին նվազել է 2.11 տոկոսային կետով և կազմել է տարեկան 8.53%, տոկոսային եկամուտը կազմել է 4.1 մլրդ ՀՀ դրամ (ընդհանուր տոկոսային եկամուտների 21%-ը)

Բանկը հետևում է համավարակից առանձնակի տուժած զբոսաշրջության ոլորտի վերականգնման դինամիկային և մշակում է նպատակային ֆինանսավորման ծրագիր: Ընդհանուր վարկային պորտֆելում կորպորատիվ վարկերի ծավալը կազմել է 44%, ընդ որում խոշոր վարկերը՝ 61%, ՓՄՁ վարկերը՝ 39%:

Յունիբանկի ընտրության պարագայում վարկավորման պայմաններից բացի կարևորագույն գործոն է հանդիսանում ճկուն մոտեցումը, հաճախորդի բիզնեսի առանձնահատկությունների ընկալումը և վարկի վերաբերյալ որոշումների կայացման արագությունը:

Բանկը առաջնորդվում էր ՓՄՁ վարկավորման ճկուն մոդելով, որպես համավարակի պայմաններում տնտեսության առավել խոցելի ճյուղերից մեկի, և ակտիվ մասնակցում էր բիզնեսի պետական աջակցման ծրագրերում գրեթե 1 մլրդ դրամ ֆինանսավորման ծավալով, 9 մլրդ դրամ ընդհանուր գումարի վարկերի վերակառուցմամբ:


Տարվա ընթացքում Բանկը շարունակել է աշխատանքը նաև միջազգային ֆինանսավորման ծրագրերով՝ KfW Գերմանական զարգացման բանկի հետ՝ արևային էլեկտրակայանների ձեռքբերման, FMO Յուլանդական զարգացման բանկի հետ՝ Հայաստանում կանանց ձեռնարկատիրության աջակցման: Յունիբանկը աշխարհի երեք բանկերից մեկն է, որոնք ընտրվել են FMO-ի կողմից սույն ծրագիրն իրականացնելու նպատակով: Բանկը հաջողությամբ անցել է «Գյուղատնտեսության ոլորտի ՓՄՁ ֆինանսավորում» KfW ծրագրին մասնակցելու նախնական ընտրության գործընթացը:

## ՓՄՁ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՌԵՎՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՑ



## ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ

2020թ. վերջի դրությամբ Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում էր 53 մասնաճյուղ Հայաստանում և Արցախում, 87 պրոմո կետ, 114 բանկոմատ, 145 վճարային տերմինալ: Մոսկվայում գործում է Բանկի ներկայացուցչությունը, որն օժանդակում է օտարերկրյա հաճախորդների ներգրավմանը: Տարվա ընթացքում Բանկը սպասարկել է ավելի քան 317,000 հաճախորդի, որից 314,000-ը ֆիզիկական անձ:



## ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկի կադրային քաղաքականությունն ուղղված է արդյունավետ և բարձր որակավորում ունեցող կադրային ներուժի ձևավորմանը, անձնակազմի ուսուցման համակարգի զարգացմանը, աշխատակիցների համար մոտիվացիոն համակարգի բարելավմանը, ինչպես նաև կորպորատիվ մշակույթի նորմերի պահպանմանը, որը ենթադրում է գործարար հաղորդակցության և սպասարկման ստանդարտների պահպանում:

Կադրային քաղաքականությունն ուղղված է անձնակազմի մանրակրկիտ ընտրությանն ու ուսուցմանը, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող կադրերի ձևավորմանը, որի շնորհիվ հնարավոր է ապահովել ծրագրված արդյունքները: Տվյալ քաղաքականությունն իրականացվում է բանկի կորպորատիվ շահերի շրջանակներում առավել փորձառու մասնագետների ներգրավման, նախաձեռնող աշխատակիցների խրախուսման և առաջ-խաղացման միջոցով: Հատուկ ուշադրություն է դարձվում պրոֆեսիոնալ մակարդակի աճին և օպտիմալ վարչակազմակերպչական կառուցվածքի ձևավորմանը:

Ընտրության, թեստավորման և հարցազրույցների ընթացքում առանձնացվում են պատասխանատու, առաջադեմ և նպատակասլաց մասնագետներ, որոնք կհսում են բանկի արժեքները և պատրաստ են դրանք զարգացնել: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության և որակավորման մակարդակի որոշման համար բանկը պարբերաբար անցկացնում է անձնակազմի ատեստավորում և ռոտացիաներ:

### 2020 թվականի աշխատանքի հիմնական ուղղություններն են՝

- բիզնես ստորաբաժանումների արդյունավետության բարձրացման նպատակով բանկի վարչակազմակերպչական կառուցվածքի փոփոխությունը,
- համակարգված ուսուցման զարգացում ու աշխատակիցների որակավորման բարձրացումը,
- վերապատրաստման ծրագրերի իրականացում և Հայաստանի առաջադեմ ԲՈՒՀ-երից ուսանողների ներգրավումը:

2020թ-ին բանկի անձնակազմի թվաքանակը կազմել է 792:

## ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից իրականացված ստուգումների, ինչպես նաև Համապատասխանության ապահովման դեպարտամենտի իրականացրած մշտադիտարկման արդյունքում արձանագրված խախտումների և անհամապատասխանությունների վերացման և ապագայում դրանց բացառման նպատակով իրականացվել են համապատասխան միջոցառումներ՝ համաձայն սահմանված ժամանակացույցի Համապատասխանության դեպարտամենտը մեծ ուշադրություն է դարձնում նաև Բանկի ներքին իրավական ակտերի՝ ՀՀ գործող օրենսդրությանը և կիրառվող բանկային բիզնես գործընթացներին համապատասխանությունը ապահովելուն, ինչի վկայությունն է այն փաստը, որ 2020 թ. ընդունվել են 22 նորմատիվ ակտեր՝ նոր խմբագրությամբ:


## ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Յունիբանկը դինամիկ զարգացող ինստիտուցիոն բանկ է, որն իր հաճախորդներին տրամադրում է մանրածախ և կորպորատիվ բանկային ծառայությունների լայն տեսականի:  
Բանկն իր առաքելությունն է համարում նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը, իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակի բարելավմանը, ինչպես նաև՝ որակյալ ֆինանսական ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջարկի բավարարմանը:

## ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- Ուշադիր և ազնիվ վերաբերմունք հաճախորդների նկատմամբ
- Ուժեղ թիմ և արդյունքին նպատակաուղղվածություն
- Հասարակության վստահություն
- Ապրանքանիշի բարձր ճանաչելիություն և հեղինակություն
- Հուսալիություն և կայունություն





## ՄԵՆՔ ԶԳՏՈՒՄ ԵՆՔ

- Ամրապնդել և ընդլայնել բանկի դիրքերը ֆինանսական շուկայում
- Ապահովել ծառայությունների մատուցման բարձր որակ և կատարելագործել սպասարկման գործընթացը
- Բարձրացնել պահանջված բանկային ծառայությունների հասանելիության մակարդակը
- Ներդնել բիզնեսի վարման թափանցիկ մոդելի և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը
- Բարձրացնել բանկի ներդրումային գրավչություն

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՅԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2021Թ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2020թ. համավարակը և ռազմական գործողությունները ստիպեցին վերանայել Բանկի ռազմավարական նպատակները, ճշգրտել խնդիրները և զարգացման գերակայությունները: Ներկայումս ֆինանսական տեխնոլոգիաները ֆինանսական ծառայությունների բաղկացուցիչ մասն են, և Բանկը, շուկայի միտումներին զուգահեռ, ակտիվորեն ներդնում է fintech-ի նորույթները: Նախանշվել են հետևյալ հիմնական վեկտորները՝ ուղղված նոր իրականությանը հարմարվելուն՝

- տեխնոլոգիական զարգացման արագացում, այդ թվում հաճախորդների սպասարկման թվայնացում, մարքեթֆիլդի ստեղծում, վարկավորման գործընթացում արհեստական ինտելեկտի կիրառման ընդլայնում, P2P փոխանցումների և վարկավորման գործարկում, բանկումատային ցանցի անհայտ տեխնոլոգիայով զինում,
- թվային վերափոխման պայմաններում ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործում,
- Բանկի ծառայությունների աշխարհագրության ընդլայնում, այդ թվում այլ երկրներում,
- <Կանաչ ֆինանսավորում> նախագծին մասնակցություն,
- Բանկի ներդրումային պորտֆելի ընդլայնում, կանոնադրական կապիտալի ավելացում,
- Բանկի ներքին արդյունավետության և արտաքին մրցունակության բարձրացում:

# ՄԵՐ ԹԻՄԸ

## Բանկի Խորհուրդը



### ԳԱԳԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ

#### Խորհրդի նախագահ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի նախագահ, «Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահ, Ռուսաստանի բանկերի միության խորհրդի անդամ, “Национальный Банковский Журнал” ամսագրի դիտող խորհրդի անդամ: Գագիկ Զաքարյանը տարբեր տարիներին արժանացել է ֆինանսական աշխարհի մի շարք առաջատար մրցանակների, այդ թվում՝ «Լավագույն բանկիր» տիտղոսին 2005 և 2007 թվականներին: 2006 թվականին «Բիզնեսի սոցիալական պատասխանատվություն» անվանակարգում ճանաչվել է «Տարվա մարդ», իսկ 2007 թվականին բանկի արդյունավետ կառավարման համար դարձել է ՌԴ Ազգային բանկային մրցանակաբաշխության մրցանակակիր: 2008թ.-ին արժանացել է մրցանակի լավագույն ռուսաստանյան ապրանքանիշ ստեղծելու համար: Ռուսաստանում կայացած «Տարվա բանկ» ամենամյա մրցանակաբաշխությանը բանկային բիզնեսում ներդրած ավանդի համար ճանաչվել է «Տարվա բանկիր - 2013»:



### ԳԵՈՐԳԻ ՊԻՍՎՈՎ

#### Խորհրդի անդամ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ, «Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդի անդամ, «Պրոտոբեյզ Լաբորատորիզ» ՍՊԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահ, ֆինանսական պլանավորման ինստիտուտի հիմնադիր և նախագահ: Իրականացրել է մի շարք հաջող ծրագրեր Ռուսաստանում և Մեծ Բրիտանիայում: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու: «Բանկային ոլորտում» տարվա մենեջեր 2003, «Ֆինանսական օլիմպ» 2009 մրցանակների դափնեկիր:



### ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ

#### Վարչության անդամ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի բաժնետեր, «Յունիլիզինգ» ընկերության բաժնետեր և Խորհրդի նախագահ, «ՌԵՍՈ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ:



### ԷՂՈՒԱՐԴ ԶԱՄԱՆՅԱՆ

#### Խորհրդի անդամ

«Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների Խորհրդի անդամ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ: Ունի մեծ աշխատանքային փորձ բանկային համակարգում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ մի շարք խոշոր ֆինանսական հաստատություններում:



### ՋՐԱՋԱՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

#### Խորհրդի անդամ

Տրանսստրոյբանկ -ի Տնօրենների Խորհրդի նախագահ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ: Ունի աշխատանքային մեծ փորձ բանկային համակարգում: Պարգևատրվել է Ռուսաստանի բանկերի միության պատվոգրով՝ ռուսաստանյան բանկային համակարգում ունեցած ավանդի և բանկի հիմնադրման 20-ամյակի կապակցությամբ:



### ԱՐՏԵՄ ԿՈՆՏՏԱՆԴՅԱՆ

#### Վարչության անդամ

Արտահանման և ներդրումների ապահովագրության ռուսական գործակալություն, տնօրենների Խորհրդի անդամ ՄՍԴ-բանկ, դիտորդ Խորհրդի անդամ «Հայաստան Իրավագիտություն» խորհուրդ, Խորհրդի անդամ «Անիվե հայագիտական հետազոտությունների զարգացում և աջակցություն» հիմնադրամ, հոգաբարձուների Խորհրդի նախագահ



### ԴԱՎԻԹ ՓՈՓԱՉՅԱՆ

#### Խորհրդի անդամ

«Հայաստանի Հանրապետության ազգային շահերի պետական հիմնադրամ», գլխավոր տնօրեն



## Բանկի Վարչությունը



### ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ

Աշխատում է Յունիբանկում 2004թ.-ից, ունի ավելի քան 17 տարի աշխատանքային փորձ բանկային համակարգում:



### ԳՈՂԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ, «Յունիլիզինգ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ: Տեխնիկական գիտությունների թեկնածու: Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 27 տարի, ACCA լիիրավ անդամ, MBA:



### ԱՐԱՐԱՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ունի մեծ աշխատանքային փորձ բանկային համակարգում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ Հայաստանի, Ուկրաինայի և Մալթայի մի շարք խոշոր բանկերում: 2009-2011 թվականներին ղեկավարել է Հայաստանի բանկերի միությունը:



### ԳՈՒՐԳԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն: Մասնակցել է որակավորման բարձրացման մի շարք ծրագրերի, այդ թվում՝ USAID-ի և KfW բանկի:



### ՕՎՍԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Վարչության Նախագահի տեղակալ - Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետքերման գծով տնօրեն, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ, «Յունիլիզինգ» ՓԲԸ-ի և «ՌԵՍՈ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ, ՀՀ բանկերի միությանը կից ֆինանսական արբիտրաժի արբիտր: ՀՀ բանկային համակարգում ակտիվ և արդյունավետ աշխատանքի համար պարգևատրվել է Հայաստանի բանկերի միության պատվոգրով:



### ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կորպորատիվ բիզնեսի զարգացման և Տնտեսագիտությունների թեկնածու: Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 16 տարի:



### ԱՐԹՈՒՐ ԱՊԵՐՅԱՆ

Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրեն



### ՀԱՅԿ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Ներքին Աուդիտի Տնօրեն

## ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Բանկում գործում է լիարժեք կորպորատիվ կառավարման կառուցվածք, որը ներառում է Բաժնետերերի ընդհանուր ժողովը, Բանկի Խորհուրդը, Բանկի Վարչությունը, Ներքին աուդիտը, Խորհրդին կից Հանձնաժողովները, Վարչությանը կից Հանձնաժողովները, Վարկային կոմիտեն և Պահուստների կառավարման կոմիտեն: Բաժնետերերի ընդհանուր ժողովը հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը, կայացնում է որոշումներ Բանկի գործունեության հիմնական հարցերի վերաբերյալ: Բաժնետերերի ընդհանուր ժողովն անց է կացվում ամեն տարի: Խորհրդի որոշմամբ նաև կարող է գումարվել արտահերթ ժողով: Բաժնետերերի ընդհանուր ժողովի ամսաթիվը սահմանում է Խորհուրդը: Բանկը տեղեկացնում է բաժնետերերին Ընդհանուր ժողովի անցկացման մասին՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելով հաղորդագրություն ոչ ուշ, քան 15 օր առաջ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվից և 30 օր առաջ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվից: Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները նույն կարգով տեղեկացվում են բաժնետերերին: Բանկի Խորհուրդը հանդիսանում է Բանկի կառավարման կոլեգիալ մարմինը, որը սահմանում է Բանկի գործունեության հիմնական ռազմավարական ուղղությունները երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև՝ ներքին վերահսկողության կազմա-կերպման մոտեցումները: Բանկի Խորհուրդը, իրականացնելով իր գործունեությունը, հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին, գործում է Բանկի և բաժնետերերի շահերի համաձայն, ինչպես նաև ապահովում է բոլոր այլ շահագրգիռ անձանց շահերը և օրինական պահանջները: Բանկի Վարչությունն իրականացնում է ընթացիկ, օպերացիոն գործունեության ղեկավարումը լիազորությունների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ: Վարչությունը հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին և Բանկի Խորհրդին: Ներքին աուդիտն ունի անկախ կարգավիճակ, գործում է Խորհրդի անմիջական հսկողության ներքո: Իրականացնում է Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության ստուգում և գնահատում:

## ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պատասխանատվության սկզբունքներին համաձայն Յունիբանկը մշտապես ամենագործուն մասնակցությունն է ցուցաբերում երկրի հասարակական կյանքում՝ իր ուժերն ուղղորդելով ենթակառուցվածքների զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը: Յունիբանկը տնտեսական և սոցիալական ծրագրերի պատասխանատու մասնակից է: Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բարեգործական և հովանավորչական ծրագրերում, որոնք ուղղված են կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների զարգացմանը, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը:

## ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԷԹԻԿԱ

Բանկում փոխգործակցությունը կառուցված է անհատի հարգանքի և արդյունքին հասնելու հիման վրա՝ նպատակ ունենալով հաջող կերպով լուծելու մասնագիտական խնդիրները և պահպանելու կառուցողական հարաբերությունները անձնակազմում: Մենք աշխատում ենք համապատասխանել գործարար էթիկայի սկզբունքներին, պահպանելով գործող օրենքները, ինչպես նաև բանկում սահմանված նորմերն ու կանոնները:

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է հետևել շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքներին: Վարկավորման ծրագրերի իրականացման ժամանակ բանկը հաշվի է առնում շրջակա միջավայրի պաշտպանության ստանդարտների համապատասխանության փաստը և նախապատվություն է տալիս էկոլոգիապես մաքուր ապրանքների արտադրությանն ու ռեսուրսախնայող գործունեություն իրականացնող ծրագրերի վարկավորմանը: Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է նվազագույնի հասցնել այն նախագծերի ֆինանսավորումը, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել շրջակա միջավայրի վրա:



## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇ

2020թ. հուլիսին Moody's Investors Service միջազգային վարկանշային գործակալությունը հաստատել է Յունիբանկի վարկանիշը B2 մակարդակում դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների համար, կանխատեսումը՝ կայուն: Բազային վարկային գնահատականը / baseline credit assessment (BCA)/սահմանվել է b3, իսկ կոնտրադենտի ռիսկի գնահատականը /longterm Counterparty Risk Assessment (CR As-sessment)/՝ B2(cr)/ NP(cr) մակարդակի վրա::

## ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿԵՐ

BANKA POPOLARE DI SONDRIO

EURASIAN DEVELOPMNET BANK

CB UNISTREAM

ALFA BANK

BANK OF GEORGIA

RAIFFEISEN BANK INTERNATIONAL AG

AO RAIFFEISENBANK

TRANSSTROIBANK

TRANSKAPITALBANK

EXIMBANK OF RUSSIA

JSC ROSSELKHOZBANK

SBERBANK

BANK VTB PAO

PAO BANK FK OTKRITIE

LANDESBANK BADEN-WUERTEMBERG

## ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվություն հաճախորդների համար  
+ 374 10 59 55 55  
callcenter@unibank.am

Տեղեկատվություն բաժնետերերի համար  
Ներդրողների և միջազգային կազմակերպությունների հետ  
հարաբերությունների զարգացման վարչություն  
+374 10 59 22 59  
ir@unibank.am  
margarita.hambardzumyan@unibank.am

Բանկի աշխատակազմ  
+374 10 59 22 59  
anna.badoyan@unibank.am

Տեղեկատվություն ՋԼՄ-ների համար  
Հասարակայնության հետ կապերի ծառայություն  
+374 10 55 56 86  
lusine.khachatryan@unibank.am

Բանկի գլխամասային գրասենյակի հասցե՝ 0025, ՀՀ, Երևան,  
Չարենցի 12, N53, 1-5  
+374 10 59 22 59, +374 10 59 55 55,  
www.unibank.am | corp.unibank.am | prive.unibank.am

Աուդիտոր՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ  
Հայաստանի Հանրապետություն, 0012, ք. Երևան,  
Վաղարշ Վաղարշյան թ., 8/1տ.  
Հեռ.՝ +374 10 26 09 64 32



UNIBANK



Anniversary